ԱՐՄԱՏԻԱ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՓԱՂԱՓԱԿԱՆ ԵՒ ԱՅԼՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ամերիկաի համար տարեկան 4 տուր թղթդրմ.
Եւրոպաի և այլ տեղերի համար արձն. 20 Ֆ
Տնօրէնութիւնն ինք կը վճարէ փոստի ծախ
Բաժնորդագրութիւնները կը սկսին ամսագլուխ ն. Տ.ի) և կանխիկ վճարելի են։ Վերատեսչ և եռամսեայ բաժնորդագրութիւններ ալ կընդունուին, առանց ոևէ յաւելման բ վրայ։
Նամակ և ծրար պէտք է դրկել հետևեալ հասցէով՝ M. PORTOUKALIAN, rédacteur du journal *Arménia* MARSEILLE (France)

Գ ՏԱՐԻ ԹԻՒ 28
1887 ՆՈԵՄԲԵՐ 19
ՆՈՅԵՄԲԵՐ 7 (Հ. Տ.)
ՇԱԲԱԹ
Կը հրատարակուի Շ. և Շբթ. օրեր

ՊԱՏՄԱՆԵՐ
Խմբագրութիւնը, եթէ հարկ համարի, համառօտելով և կամ մասամբ միայն կը հրատարակէ իրեն դրկուած գրութիւնները։ Պարտաւորուիչ չէ վերադարձնել չհրատարակուած ձեռագիրները։
Յանուցումներ կընդունուին հայերէն և ֆրանսերէն լեզուով։
Յանուցման 1 միջակ գիրը 1 սանդիմ կարժէ. 1 գլխագիրը 2 սանդիմ։

Les annonces, en français et en arménien, sont reçues au bureau de la Rédaction (Rue Vacon, 50)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մի Ռումանիացի Հայի տեսութիւնը Կ. Պոլսի Հայերին վրայ. — Հայրենագիտական (Թափառականի մը յիշատակները). — Հայեր ի Թիւրքիա. — Տեղական. — Օտեանի մահարձանը. — Ընդդիմախօսութիւն (Նամակ Գահիրէից). — Ֆրանսական լուրեր. — Արտասահմանի լուրեր. — Յանուցումներ։

ՄԻ ՌՈՄԱՆԻԱՑԻ ՀԱՅԻ ՏԵՍՈՒԹԻՒՆԸ Կ. ՊՕԼՍԻ ՀԱՅԵՐԻՆ ՎՐԱՅ

(Շար. 27րդ Թիւէն)

Օտար Հայու մը համար, զարմանալի է Պօլսոյ Հայերուն այսօրուան գանուած վիճակին երեւոյթը թէ՛ իրենց Պօլսոյ քաղաքացի և թէ՛ իրրեւ Հայազգի. ինչու որ եթէ լաւ նկատելու ըլլաս, Պօլսոյ ամէն Հայերու վրայ զատ զատ կամ թէ հաւաքարար և մանաւանդ, զարմանալի անհաւասարութիւն կը գտնես անոնց ամէն մէկուն դաղափարին, վարած կեանքին և տեսած գործերուն մէջ. Օրինակի համար, Սահմիթեայի Հայերն կը տեսնես որ իրենց գործին մէջ ժիր են, հայութեան մէջ նախանձաւոր եթէ իրենի տաժարնին բռնէ, ուսման և գիտութեան վրայ մեծ սէր ունին, արուեստներու մէջ ալ բաւական յաջողակ և իրենք ալ արտաս և լեզու բերան ունին. սակայն իրենց կեանքին մեծ մասը, մանաւանդ իրենց ծագիկ հասակը, գինեատուներու մէջ կանցունեն և օղի խմելով ու խմցնելով մեծ պատիւ կվաստան. հետեւաբար կոչտ կոպիտ վարք մը ունին թէ՛ իրար նկատմամբ և թէ՛ իրենց ընտանեկան կեանքին մէջ։ Ուսմունք, գիտութիւն, բարոյականութիւն, քաղաքակրթութիւն նշանակութիւն չունին իրենց այդ մոլութեան դէմ։ Մինչդեռ ազար հակառակ, Խասգեղցի Հայերն այդ միտում չունին. աղանց մէջ միշտ բարձրանալու և բարեկրթուելու մեկ ձգտում կայ, թէեւ սակայն բոլոր իրենց անկեալ վիճակին պզտկելքէն, տեսակ մը ամբարտաւանութիւն և ինքնահաւանութիւն ունին որ զիրենք կը մոլորեցնէ բնական և ազգային կրթութիւն մը ձեռք բերելէն. կը տեսնես որ արք և կանայք չէնք չնորհք ունին և աղնուական հով մը կայ վրանին, սակայն ինչպէս ըսի, իրենց խորին եռութիւնը զիրենք լմնատակ կընէ և երբեմն ցնորական գաղափարներու մոլի, իրենց ազ. ինքնահաւանութիւն կը ծնի իրենց մէջ, երբ իրենք զիրենք կը բաղդատեն Օրթագիւղի, Բերայի, Իւսկիւտարի և ուրիշ գեղերու հետ, որոնց վրայ ինքզինքնին գերազանց կը համարին ամէն բանի մէջ. իրաւ է որ, ինչպէս ալգէն ըսի, չատ փոռաւոր եկեղեցի մը ունին, ինչպէս նաեւ երբեմն բաւական կարգաւոր դպրոցներ ալ ունին եղեր, սակայն հիմայ ամէն բանէրնին խեղճ վիճակի մէջ է, նոյն իսկ իրենց հայութիւնն, որ օրէ օր օտարութեամբ կը մշակուի, մոքերն ու գաղափարները կը հեռանան ազգութենէն, ֆրանսերէն լեզուն մայրենի լեզու կը դառնայ իրենց մէջ աւանդ իրենց բարոյական և մտաւոր օգուտ մը բերելու, հապա սխալմունք է կամ զարդի համար է միայն աղկանց մէջ և գործ մը, չատ մը ճարելու համար երիտասարդաց մէջ. աղգութեան հոգին, Պօլսոյ Հայոց մէջ, մանաւանդ այս խաղիւղցոց մէջ, իրենց քաղաքի հովերուն կը նմանի, երբեմն սաստիկ տաք հարաւ հովին պէս, երբեմն սաստիկ ցուրտ հիւսիսի հովին պէս. մի օրինակ ոչինչ չկայ աղանց մէջ, վասն զի ամէն բան իրենց մէջ ինքնասահման չէ հապա հեռաւորութիւն, որուն մէջ երեւելի են Օրթագիւղի Հայերը. երբ Օրթագիւղի Հայերը կը ճանչնաս, Խասգեղցիները կը սիրես. աղանք սրբ և կանայք օրէ օր կը մրցին իրարմէ գեղաղանցելու, իրր թէ կրթուելու մէջ. եթէ երբէք քեզ պատահի գիշեր մը Օրթագեղցի նշանաւոր Հայու մը տուն գանուիլ, կը տեսնես այն տեղ Փարիզեան հագուստներով մասքմատզէլները, մատամները, էֆէնտիները և պէյերը. թէ որ մօսիւ անունով մէկը գտնուի այնտեղ, հասկցիր որ ան վարժապետ է կամ թէ պարի կամ բնաօթ ուսուցիչ. Ա.յս ալ դիտնաս որ վարժապետները Հայերէն սիրուած չունին Պօլսոյ Հայոց դպրոցներուն մէջ. ո՛չ պարան կը կոչուին, ո՛չ հանարգանք է այդ սիրուածը եթէ մէկուն տալու ըլլաս, ո՛չ պատուելի, որովհետեւ Բողոքական երէցներուն սիրուած է այդ, ո՛չ եղբայր, վասն զի սիրացու չեն և ոչ ալ ժամկոչ, էֆէնտի սիրուած ալ Տաճկի կը հոսի քիչ մը, այսինքն Տաճկի գործի հետ վերաբերութիւն ունեցող. ուստի Հայերէն արժանաւոր սիրուած մը չգըտնելով, վասն զի վարժապետ կամ վարդապետ բառերն իրենց նշանակութիւնը փոխած են, մօնսիէօ կը կոչուին։ Թէ՛ տպայոց և թէ՛ ապկանց բարձր ու ցած դպրոցներու մէջ ամէն ուսուցիչ Մ'օնսիէօ բառով կը կոչուին, մանաւանդ այն դպրոցներու մէջն ալ որոց տնօրէնները Պօլսոյ Հայոց մի քիչ աչքառիւիկ յատակ լեզու մը խօսել սովրեցնելու կարող չըլլալով, եղեր են գրաբար գրել և խօսել սովրեցնելու, որպէս զի ոչինչ չը սովրին Հայերէն։ Ճիշդ այդպէս ալ է Օրթագեղի Հայոց աղկանց և աղջկանց դաստիարակութիւնը. կը տեսնես որ քանի մը գրաբառ բառերով ֆրանսերէն կը խօսին, իսկ ֆրանսերէնն ալ Պօլսոյ մէջ խօսած լեզուի քերականութեամբ և չեշտով. այդ կերպ իրար հետ կը խօսին իրարու այցելելու ժամանակ, իսկ երբ ծառաներու կամ ազէտներու հետ խօսելու ըլլան, իրենց մտածուղ լեզուն ունին. «ծօ՛ աղբար, պէ՛ աղբար» են իրենց էֆէնտի կամ մ'օսիէօ բառերու տեղ գործածածը։ Առ հասարակ Օրթագեղցի Հայ է եղեր, Իւսկիւտարցի, Խասգեղցի կամ ուրիշ տեղացի, թէ որ հայերէն լեզուի ուսուցիչ չէ կամ լմբագիր չէ, այսինքն իր կեանքն երկար ժամանակ Հայոց լեզուով չէ մաշեցուցած, կին ըլլայ, մարդ ըլլայ՝ զուտ Հայոց լեզուով, առանց ֆրանսերէն կամ տաճկերէն բառ խառնելու հայերէն չկրնար խօսիլ. անպատճառ՝ ինչ նիւթի վրայ խօսելու որ ըլլայ, չատ մը կամ ֆրանսերէն կամ տաճկերէն բառեր պէտք է խառնէ. Աստուած հեռու ընէ, եթէ հագուստի կամ կերակուրի վերաբերեալ խօսակցութիւն մ'ըլլայ, կամ թէ քաղաքական կամ դրամական։ Երեսուն տարուան խմբագիր եմ տեսած, որ տատիկ անշահ հայերէն կը խօսի, թէեւ քաղ Հայերէն գրողի անուն է հանած. և տասնք ելեր են որ Հայաստանի Հայերուն հայութիւն սովրեցուցեր են և Հայերն իրենց Հայութեան մէջ պահեն, մինչդեռ իրենք անոր մէջէն սպրդուելու փախչելու մէջն են։ Գիշեր մըն ալ Խասգեղց գտնուեցայ քանի մը խելքով և դրամով աղնուականներու մէջ, որոնք ժողովեր էին Թուրքի խաղալու համար։ Թուրքի խաղալու համար երեկոեան ժողովքներ չատ կըլլան Պօլսոյ մէջ, գրեթէ ամէն գեղ. բայց գլխաւորապէս ձմեռ ժամանակ Բերա, Օրթագեղ, Խասգեղ և ամառն ալ Պէօյիւքտէրէ և ուրիշ գեղեր։ Խասգեղցիի Թուրքաժողովոյն մէջ տեսայ քանի մը մտածող, հասու բարակը իրարմէ զատող Հայեր և իրենց ողբմելի վիճակին վրայ գիտակցութիւն ունեցող. սակայն նոյն ժողովքին մէջ անանկներ ալ տեսայ, որ Հայոց ազգութիւնն, կրօնը, Հայրենիքը, լեզուն, անցեալն, ներկան և ապագան իրենց համար նշանակութիւն չունին, հապա ոսկին, պաշտօնը, աստիճանը և դրամօժայով կինը։ Իրենց ուսմունք միայն միջոց է այդ բաները ձեռք բերելու. իսկ իրենց կրթութիւնն ալ այն է որ Օսմանեան տէրութեան պաշտօնի վրայ եղող վաշաներուն հաճելի ըլլան։ Իրենց պաշտօնէն գուրս գէմատր պատասխանն է թուրքախաղութիւն կամ այդպիսի ակումբներու մէջ, կամ թէ Բերայի կլուպի մէջ և ուրիշ տեղեր։ Ինձի հետ մեկտեղ այդ գիշեր այդ նշանաւոր տուն հիւրերը եկան, մեծ անուն ունեցող եկեղեցական մ'ալ, որուն անունը տալ հոս տեղ հարկ չէ կայ. ես այդ եկեղեցականի հետ կը խօսէի. թէեւ ճշմարիտն ըսելով, ես ալ իրրեւ ռուսմանիացի կը սիրեմ թուրքի խաղալն, սակայն այդ գիշերը այդ պատկառելի եկեղեցականին յարգ մը տալու համար ես կեցայ թուրքի խաղալէն. խօսքն, մեր այդ եկեղեցականին հետ, երթալով մէջերնիս երկընցաւ և մեծցաւ, այնպէս որ այնտեղ գտնուողներուն մեծ մասին չատերուն ուշադրութիւնը մեր վրայ դրաւեցինք։ Տեսայ որ այդ եկեղեցականը քիչ մը մեծ մեծ կը խօսի Հայոց եկեղեցականներն պաշտպանելու մէջ և միշտ ինձ օրինակ կը բերէ հինները. ինձ նայէ, քեզի ըսեմ, ըսի այդ եկեղեցականին, դիտես որ այդ Հայաստանեայց եկեղեցին և հին եկեղեցականներն ինչպէս որ հին ժամանակներն իրենց դիտութեամբ և առաքինութեամբ վերջապէս ազատեցին Հայոց ազգն ու եկեղեցին Պարսից և Յունաց ձեռքէն, այսօր ալ նոյն Հայաստանեայց եկե-

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

(Շար. 27րդ թիւն)

Մեհրտեսի տան ճակատը, մեծ պատուհանէն, ներս կը նայէր ուղիղ արեւը, ու ներս եղածները կ՚ուզէին ամէն կերպով խոյս տալ անկէ, որովհետեւ անտանելի էր անոնց համար։ Ամէն կողմ, ուր որ կարելի էր, ներս կը մտնէր լոյսը, ու ամէն կողմ, ուր որ կարելի էր, ներս կը մտնէր նաեւ տաքութիւնը։

ՏԵՂԱԿԱՆ

Հոպելոյս Ներսէս Պատրիարքի տխրահիմ վախճանման երրորդ տարելիցին առիթով անցած կիրակի օր լինելիք յատուկ Պատարագն և հոգեհանգստի պաշտօնն ինչ ինչ պատճառներով վաղուան (նոյ. 20 կիրակի) թողուած է։

Մեծ յոյս ունինք որ Մարսէյլա-բնակ բոլոր մեր հայրենակիցները կը փութան ներկայ գտնուիլ վաղը Հայ մատուռը կատարուելիք տխուր հանդիսին, պատուելու համար հայրենասէր Ներսէս Պատրիարքի անմոռանալի յիշատակը։ Ս. Պատարագը կը սկսի ըստ սովորականին ժամ 10ին։

—Աղետաշունչ Տիկին Նուպար փաշա չորեքշաբթի երեկոյ Մարսէյլէն մեկնեցաւ Եգիպտոս երթալու համար, Մէսաժըրիի Սալազի շոգենաւով։

— Քաղաքապետութիւնը որոշեց հացի առաջին տեսակի քիլօն 37 ½ սանթիմ և երկրորդ տեսակինը 27 ½ սանթիմ, ամսիս երկրորդ կէսին համար։

ՕՏԵԱՆԻ ՄԱՀԱՐԺԱՆԸ

Կը լսենք թէ Փարիզի մէջ հանգանակութեան ձեռնարկուեր է, վասն Օտեան էֆ-ին մի չիբիմ կանգնելու համար փառաւորապէս։ Մեծ. Պ. Պ. Անդրանիկ և Գաբրիէլ Էգնայեան եղբայրնէրն 1000 ֆր. տուած են, իւրաքանչիւրն 500ական ֆրանգ առաջադրելով. Մեծ. Պ. Պէարա Կիւղէ 300 ֆրանգ տուած է և ուրիշ մի քանիներ ալ տարադրած են արդէն։ Ձանազան տեղեր հանգանակութիւններ պիտի բացուին, այդ չիբիմի կառուցմանը համար։

ԸՆԴՀԻՄԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Գահիրէ, 7 Նոյ. 1887

Պատուական լրագրոյդ Գ տարւոյ 20 թիւ թերթին մէջ զարմանօք կարդացինք Զարմայր տարագրութեամբ յօդուած մը, որ ծայրէ ի ծայր լի էր անհիմն և սխալ տեղեկութեամբք, նկատմամբ ազգային հաստատութեանց և գործոց Գահիրէի։ Պ. Զարմայր տեղւոյս Խորհրդեան վարժարանի վրայ խօսած առեն՝ ըսյն անբարեկարգ կը հռչակէ ըսելով թէ ձեռնհաս և աչալուրջ հսկողութենէ զուրկ է և թէ մեր ներկայութեան աշակերտը քննած առեն՝ այս վերջինը տատասխանները ըրած է։

Որովհետեւ մեր անուան յիշատակութիւն եղած է, ըստ օրինի իրաւունք ունինալ կը կարծեմք, իրրեւ անդամ Ուսումն. Խորհրդոյ Ազգային Գատաս. Վարչութեան՝ հերքել նոյն յօդուածին վարժարանի պատկանեալ մասն։

Ուսումն. խորհուրդն իւր պարտքը պարագայից և միջոցներուն նեղութեան չափ անթերի կատարած է և անհոգնաբար անձանձիր և ազատօրէն կը ճեմայ գնահատել վարժարանի վրայ իւր հսկողութեան արդիւնքը։

Աղբի խորհրդոյ օրով վարժարանի ծրագրին վրայ յաւելեալ են անհրաժեշտ ուսումները, որք լենամով կանոնագրին ի ձեռն վկայեալ և կարող ուսուցչական մարմնոյ մը, այլ գլուխը գտնուող երիտասարդին պաշտօնավարութեան օգտակարութիւնը ճանչցուած է իրարու յաջորդող երեք Ուսումնական խորհուրդներէ և այլ երկու անդամներն կը գտասխօսեն նաև կառավարական բարձրագոյն կրթարանաց մէջ։

Խորհուրդը մանաւոր չանք կը տանի նիւթական կանոնաւոր մատակարարութեան, որ գլխաւոր երաշխաւորութիւնն է բարոյական յառաջդիմութեան։

Պ. Զարմայր կը կարծէ նաեւ Խրքենեան վարժարանի անբարեկարգ լինելն հաստատել՝ միայն մեկ աշակերտի տատասխանները պատրուակ բռնելով։

Պ. Զարմայր, որ երկու տարիէն աւելի ժամանակ նախորդ Ուսումն. խորհրդոյ անդամ եղած և այդ ամբողջ շրջանին մէջ՝ աշակերտաց ուսումնական վիճակը քննելու համար՝ գէթ մեկ անգամ վարժարանն այցելել հաճած չէ, վերջերս բազում դիտաւորութեամբ վարժարան կուգայ ի պահուն, յորում Խորհրդոյ և Պ. անօրէնի ձեռամբ կը կատարուէր աշակերտաց մանաւոր հարցաքննութիւն մը։ Պ. Զարմայր ներկայ այս հարցաքննութեան մեկ մասին՝ կատաղարիւն բարձրագոյն կարգէ ուսանողներէն տակաւին դրել տալ պարբերութիւն մը, որոյ մէջ տեսնուած սխալներն Պ. Զարմայր մանաւոր վոյթ ունեցած է չափազանցեալ ներկայացնելու Արմենիա ի մէջ։

Հակառակ մեր առաջարկին՝ Պ. Զարմայր առանց նոյն կամ ուրիշ կարգի աշակերտներ եւս քննելու հայերէնի կամ այլ ուսմանց մէջ, առանց տղկանց կողմն այցելութիւն մը տալու գէթ, առանց վարժարանի ընթացիկ և ուղղութեան և իւր քննած աշակերտին նկատմամբ ո՛ եւ իցէ տեղեկութիւն տատնալու, կշտապէ մեկնիլ վարժարանէն իւր այն թէ յաղթանակի մը տիրացած է։

Արժան է դիտել տալ թէ հայացքնեալ նորեկ աշակերտն՝ իւր հասակի մեծութեան պատճառաւ բարձրագոյն կարգին մէջ դրուած էր, այնու յատուկ թէ կրկնապատիկ ջանք պիտի կրնայ համընթաց լինել նոյն կարգի աշակերտաց. սակայն երբ այս յոյս վրիպած է, յիշեալ աշակերտն յաջորդ կարգի ուսանողաց պատակից եղած է։ Յիշել հարկ է նաեւ թէ ո եւ իցէ պարբերութիւն անսխալ գրելու կարողութիւնն կրնայ պահանջուիլ միայն անոնցմէ, որք աւարտած են քերականութիւնն, քիչ շատ ուսումնասիրած են գրականութիւնն և ըստ բաւականին վարժ են շարադրութեան։ Պ. Զարմայր պէտք չէր որ այդչափ խոտոտպահանջ ըլլար համբակ աշակերտի մը։

Պ. Զարմայր լրագրոյդ մէջ յօդուածները հրատարակելով նպատակն է ցոյց տալ թէ ինք ազգային դաստիարակութեան ծաւալման նախանձախնդրութիւն և ազգի սէրն ունի սրտին մէջ. սակայն իր գրութիւններն, արդիւնք անձնական բուռն կրից, կասկած կը ներշնչեն իւր այդ զգացմանց էութեան վրայ. ժանաւանդ այն որ հրապարակի վրայ կը գրէ, պարտի կէտ նպատակի ունենալ ազգին օգուտն, մինչդեռ Պ. Զարմայրի յօդուածներն յերիւրեալ են այն նպատակաւ որ Հայ ծնողաց ազգային վարժարանի՝ Գեր. Առաջնորդ Սրբազան Հօր գալատնէն ի վեր տալ սկսած և հետզհետէ աճած յարգն նուազեցնեն։

Պ. Զարմայր կը գրէ նաև թէ Գեր. Առաջնորդ Սուրբ Հայրն իւր ամբողջ պաշտօնավարութեան մէջ միայն մեկ անգամ այցելած է ի վարժարանն։

Պ. Զարմայրի այս անհերթեթ ուսմանդամ ընդ միշտ կապացուցանէ թէ ՁՇՄԱՐՏՈՒԹԻՒՆ և համանման վարդապետն բառերը ղարդ են միայն իւր գրչին։

Պ. Զարմայրի այս յայտարարութիւն պարագ կը դնէ մեր վրայ հրապարակաւ երախտագիտութիւն յայտնել Նորին Սրբազնութեան, որ ոչ միայն իւր այցելութիւններով վարժարանի պաշտօնէութիւնն քաջալերել, այլ և շուրջ երկու ամիս երկսեռ ուսանողաց կրօնի և Ս. Պատմութեան դասերն աւանդել բարեհաճած է։

Անդամ Ուսումն. խորհրդոյ
Ազգ. Դատ. Վարչութեան
Տիգրան Եպիփանեան

ՖՐԱՆՍԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Երեսփոխանական ժողովը որոշեց դատի ենթարկել Պ. Վիլսոնը, Հանրապետութեան Նախագահի փեսան, որովհետեւ իր տան մէջ պրատուած նամականիներէն երկուքը՝ ինչպես եղեր է, գողցուելեն յետոյ և անոնց տեղ ուրիշներ գրուեր են, չխմայուելու համար։ Այդ նամականիներ անյայտանալուն համար՝ որոնք կը կարծուի թէ կարեւոր գաղտնիքներ կը պարունակէին Պ. Վիլսոնի ապօրինաւոր գործերի մասին, ոստիկանութեան գլուխ Պ. Կրանեօն և ուրիշ մի քանիներ պաշտօնանկ եղած են։

—Թէեւ այժմէն կը պատրաստուին զանազան կատակերգութիւններ Հանրապետութեան Նախագահի պաշտօնին ընտրելիները ներկայացնելու, բայց Պ. Ժիւլ Կրեվիի ժառանգը չէ հրաժարական տալ և երեսփոխաններն ալ չեւարած են թէ ինչ կերպով պատասխանեն պինք հրաժարական տալ, առանց ծայրայեղ միջոցներու դիմելու։ Պ. Կրեվիի Սահմանադրութեան դէմ եօթամեայ պաշտօնավարութեան սահմանին մէջ օրէնքով պատասխանատու, չուզեր իջնել իւր աթոռէ, իր փեսայի վերաբերող գործերի պատճառով, զոր սակայն կը պաշտպանէ անուղղակի։

— Լը Ֆլօ գործակալը որ երթեմն ֆրանսական դեսպանութեան պաշտօնեան վարած է Պեռերբուրգ և Ալեքսանդր Բ Զարին սիրելին եղած, մեռեր է չորեքշաբթի օր Մօրլէի մէջ ուր քաշուած էր վերջին ժամանակները։

—Լոնտոնէն կիմացուինն որ Ֆըրանսայի Նախկին կայսրուհի Էօժէնին հիւանդացեր է։ Ա.յդ հիւանդութեան պատճառով զառանցանքներ կունենայ։ Իւր ամուսնու Նափոլէոն Դ ի և որդու պատկերներն դարս հանած են իւր պառկած սենեկէ։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ԼՈՒՐԵՐ

Զարըիօբէնհակէն մեկներ է նոյ. 17ին և երկ առաւօտ հասեր է Պէրլին։ Պատրաստութիւններ եղած են իրեն չքեղ ընդունելութիւններ անելու համար։ Կասեն թէ Զարը չպիտի երթայ Օրէանի որովհետեւ իրեն դէմ դաւադրութեան երկիւղ կայ եղեր։

—Ալմանիայի Ակուստա կայսրուհու հիւանդութիւնը ծանրացեր է։

—Սան-Րէմօյէն եկած հեռագիրներին նայելով, Ալմանիայի գահաժառանգ իշխանի կոկորդի հիւանդութիւնը վերստին ծանրացեր է. խօսիլ գրեթէ չէ կարող այժմ։ Տօքթ. Մաքէնզին աճապարանօք կանչուած է Լոնտոնէն։

—Մսկուայի պահապան զօրքերի թիւը իջուցած են 3000ի։ Հնձելազօրքի գունդեր զրկուած են Բոլոնիա ուր մի տեսակ յուզում կը տիրէ։ Բազմաթիւ զօրքեր կըհամախմբուին Փիէվի դծին վրայ։

—Իտալական Խորհրդարանի բացումը եղած է նոյ. 16ին։ Թագաւորը, Թագուհին և գահաժառանգ իշխանը ներկայ գտնուած են։ Թագաւորը բացման ճառին մէջ ասած է որ Իտալիա իւր ղէնքերով զօրացած, իւր դաշնակցութիւններով ապահովուած, բոլոր կառավարութիւններին բարեհամբաւ եղած, կը շարունակէ իւր բարձր ընթացքը մեծ պետութիւններու խմբին մէջ։ Եւրոպայի միւս մեծ պետութիւններն ալ, բսած է, մեզ պէս անկեղծօրէն կը փափագին խաղաղութեան։

—Լուր կայ թէ Պիսմարք իշխան պիտի երթայ Սան-Րէմօ (Իտալիա), Ալմանիայի գահաժառանգ իշխանի վիճակը անձամբ տեսնելու համար։

— Անգլիացէն հաղորդուած հեռագիրներն կհնթադրեն թէ ռուսական գեսպանը կաշխատի Կ. Պոլիս որ Սուլթանը հատնութիւն չտայ Սուէզի անգլօ-ֆրանսական գաշնագրին. բայց Սուլթանի հատնութիւնը անտարակուսելի է։

Միւնհէնի հեռագիրներին նայելով, Ռուսիան կը չարունակէ ճնշում բանեցնել Թիւրքիայի վրայ որպէս զի դրաւէ Պուլկարիան։ Միւս կողմէ, Պուլկարներն ալ Բ. Դրան առաջարկած կը լինեն տարեկան 160 հազար Օսմ. ոսկի վճարել իրեն երթ հաճի հատնութիւն տալ Քօպուրկի իշխանին։

—Զարը լսած է Պէրլինի ռուսական դեսպանատունը ուր Վիլհելմ

կայսրը եկած էր իրեն բարի գալուստ մաղթելու։ Ճանապարհին վրայ ժողովուրդը չերմ ընդունելութիւն չէ ցոյց առած Զարին։ Զարը փոխադարձ այցելութեան գնացած էվիլհելմ կայսրին իւր պալատ։ Պիսմարք իշխանը Զարին այցելած է դեսպանատունը. նախապէս այցելած էր իրեն Զարին Թիւինապահը Չերեվին։ Վիլհելմ կայսրը երեկոյին մի չքեղ ճաշկերոյթ տուեր է Զարին։ Ճանապարհին վրայ Զարի կառքին մէջ թռուղթ նետեր են երկու անձեր որոնք ձերբակալուած են։ Զարը մեկնած կը լինի Պերլինէն երեկ երեկոյ։

ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԱԶԴ

Հարկ կը համարինք ծանուցանել Արմենիայի բաժնորդ գրուիլ ցանկացողներին որ չուզելով ոեւէ ծախսերդ հաշիւ ունենալ մեր բաժնորդների հետ լրագրի գ տարեշրջանին վերջ (1888 յուլիսի վերջ), այսուհետեւ տարեկան բաժնորդագրութիւն չենք կարող ընդունիլ Արմենիայի համար։

Ինչպէս գրուած է արդէն Արմենիայի ճակատը, բաժնորդագրութիւնները կը սկսին ամսագլուխներէն (Նոր Տոմարի համեմատ)։ Ուստի անոնք որ կուզեն իրենց բաժնորդագրութեամբ պատուել և ջջալերել Արմենիան, իրենց սկսած ամսագլխէ մինչեւ 1888 Յուլիսի վերջ ամէն մէկ եռամսեայի համար 5 ֆր. հաշուելով պէտք է ղրկեն բաժնորդագինն. իսկ եթէ եռամսեայներէն դուրս մէկ կամ երկու ամիս ալ Յոյս մինչեւ 1888 Յուլիսի վերջ, պէտք է 2 ֆր. հաշուել մէկ ամսի համար։

Հայրենասիրական հրատարակութիւններ

Արմենիայի խմբագրատունը ծախու կը դնէ հետեւեալ աժանագին վէպիկները, որոնք Պետերբուրգ տպագրուած են, յատկապէս հայ ժողովրդին մէջ անձնազոհասիրութեան և հայրենասիրութեան գաղափարներն տարածելու նպատակով։

1. Ռուիշի գերեզմանի վրայ առաջց արտասուքի են լաց լինում. (Նիւթը առնուած է Հայերի կրած հարստահարութիւններէն Տաճկահայաստանի մէջ, վաչխատուս հայ հարուստներու և զաղրաթաղոյ ու բարբարոս գայմագամներու ձեռքէն)։ Գինն է 20 մեդ.

2. Բուլղար ապազակապետ. (Բրիտանիայի հանգստութեանը համար Թիւրքիայի ստրագրած դաշնագիրներուն մեռած տառերը լինելը ցոյց կուտայ. կը նկարագրէ մի մահմետական գաղանութեան զոհ եղած մի բուլղար ընտանիքի սրտաճմլիկ դրութիւնը և վրիժառութեան համար գործնական միջոցները ցոյց կուտայ)։ 20 սանդիմ.

3. Ժանննա տ'Արք—Գաղղիայի ազատող (Ետաերին յայտնի է այս մանկամարդ հովուուհուն, այս գիւղացի աղջկան հայրենասիրական եռանդը որով մի խումբ մարդիկ գլուխը ժողված, հիանալի յաղթութիւններ տարաւ Անգլիացիներին դէմ երբ ասոնք ամեն կողմէ ճնշած և նեղը ձգած էին Ֆրանսան)։ 15 սանդ.

4. Նեղա — Տատիս պատմածը (Նիւթը առնուած է Թիւրքերի տիրապետութեան ժամանակ Պուլկարիայի մէջ Տէլիպաշներին արած բարբարոսութիւններէն)։ 20 սանդ.

5. Դօնջօ — Բուլղար ապազակապետի պատմածը (Հարստահարուած հայրենիքի վրէժն առնելու համար՝ հնոջ մանակցութեամբ կազմուած մի ապազակային խմբի գործերն կը պատմէ)։ 20 սանդիմ.

Վերոգրեալ տետրակներն կը զբաղուին իրենց առջեւ նշանակուած գիներով, փոստի ծախքը Արմենիայի խմբագրութենէն վճարուելով։ Ով որ 20 տետրակ գնէ մէկ անգամէն, այսինքն չորս օրինակ իւրաքանչիւր տետրակէն, 0/0ին 12 զեղչ կանենք վերոգրեալ գներէն վրայ, այսինքն կը ստանան 20 տետրակին համար 3 ֆր. և 35 սանդիմ, փոխանակ 3 ֆր. և 80 սանդիմի։

Աւժէ.քը կանխիկ չվճարուած՝ գիրք չղրկուիր։

ՅԱՅԻՒ ԳԻՐՔԵՐ

Արմենիայի խմբագրատունը ծախու կը գտնուին հետեւեալ գիրքերն որոնք իրենց առջեւ նշանակուած գիներով կը ղրկուին ուզողներին, փոստի ծախքը խմբագրատունէն վճարուելով։ Ստակը կանխիկ չվճարուած գիրք չղրկուիր։ Կարելի է ստակ ղրկել մանաւանդ փոստով կամ ֆրանսական նամակադրոշմներով (timbres-poste). նոյնպէս և ամերիկեան տոլար թղթադրամով (1 տոլարը 5 ֆրանգի հաշուով)։

1. ՐԱՖՖԻ—ԿԱՅԾԵՐ. Ա և Բ հատորներ.

Աղգային վիպագիրը Պրն. Րաֆֆիի գործերին մէջ առաջին տեղը կը գրաւեն ԿԱՅԾԵՐը։ Այս գիրք կը ծանօթացնէ ընթերցողը տաճկական և պարսկական Հայաստանի գլխաւոր տեղերին հետ, հետաքրքրաշարժ տեղեկութիւններ կուտայ քուրդերի պահպանած ցեղերի և հայերի դրութեան, վարքի և բարքի մասին։ Նա ցոյց կը տայ այն ծրագիրը որին պէտք է հետեւին Հայաստանի մէջ գործել ուզողներն։ Մի խօսքով, թէ՛ իբր ազգային ընտիր վիպասանութիւն և թէ՛ իբր հայրենասիրական գործունէութեան վարդապետարան և ծրագիր, արժան է որ գտնուի այս գիրք ամեն հայրենասէր Հայի տունն։

Գին Ա հատորին 7 ֆր. Բ հատորին 8 ֆր. և 50 սանթիմ։ Երկու հատորներն միասին գնողին 15 ֆր.։

2. ՐԱՖՖԻ—ՓՈՒՆՋ. Ա և Բ հատորներ (Ա հատորը կը պարունակէ Րաֆֆիի ոտանաւոր բանաստեղծութիւնները և Բ հատորն իւր գրած մի քանի վէպերն)։ Երկու հատորներն միասին 10 ֆր. և 50 սանթիմ։

4. ԳԱՄԱՌ-ՔԱԹԻՊԱ. — ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ. (Աղգային առաջնակարգ բանաստեղծ Ռ. Պատկանեանցի աղատաշունչ և հրահանգիչ բանաստեղծութիւնները կը պարունակէ. սիրգէն դրուած է հեղինակին պատկերը)։ 2 ֆր.

5. ԳԱՄԱՌ-ՔԱԹԻՊԱ—ԱԶԱՏ ԵՐԳԵՐ. (Դամառ-Քաթիպան «բանաստեղծութիւններ»էն Ազատ երգերի մասը առանձին տետրակով տպագրուած), 20 սանթիմ։

6. ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ — ՎԱՆԳՈՑԺ. (Ամեն. Խրիմեան Սրբազանի գրած սրտաշարժ, խրատական և աղատասէր տետրակը 1876ի Վանի հրդեհին նկատմամբ)։ 70 սանթիմ.

7. Գ. ԱՐՈՎԵԱՆՑ — ՀԱՅՈՑ ԱԶԳԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ. (Ամեն Հայի համար անհրաժեշտ պարագ է իմանալ իւր աղգի պատմութիւնը, գիտնալ թէ ինչպէս սկսեր է իւր աղգ, ո՛րտեղ ունեցեր է իւր հայրենիք, ինչպէս եկեր հասեր է մեր օրերը, ո՛րոնք եղած են իւր երջանկութեան և իւր թշուառութեան պատճառները եւայլն։ Գէորգ Արովեանց որ Տփղիսի Ներսիսեան վարժարանին մէջ Հայոց պատմութեան ուսուցիչ էր և որ յանկարծ մի օր, չդիտցուիր ինչ կերպով, անյայտացած է, իւր ատենագած դասերի համառօտութիւնը գրի վրայ ամփոփած և թողած էր։ Այդ «Համառօտութիւն Հայոց աղգի պատմութեան»ը որ մինչեւ այժմ երբորդ տպագրութեան արժանացած է, ի սկզբան կուտայ տեղեկութիւններ Հայաստանի հին աշխարհագրութեան վերաբերեալ և պատմութիւնն ալ այնպիսի ոճով կանէ որ չներկայացնէր միայն թագաւորների կռիւները, այլ և կը պատկերացուցանէ հայ ժողովրդի վիճակը)։ 2 ֆր.

8. ԳԱԲՐԻԷԼ ԵՊ. ԱՅՎԱԶԵԱՆ — ՆԻԿՈԼ. ԵՊԻՍԿՈՊՈՍ (Պատմութիւն դարձեալ Հայկազանց Լեհաստանի և Կաթոլիկութիւն)։ 1 ֆրանգ

9. ԳԱԲՐԻԷԼ ԵՊ. ԱՅՎԱԶԵԱՆի գրած ԼՍԱՐԱՆ անուն հետեւեալ տետրակներն որոնք հոգեշահ պատմութիւններ և օգտակար տեղեկութիւններ կուտան, կը ծախուին իւրաքանչիւրը 35 սանթիմ

Ա. Պատմութիւն վարուց Մեծին Ներսէսի Հայրապետին մերոյ։

Բ. Եզիպտոսի հետաքրքրութիւնները։

10. Ա. ՏԷՐ ՅԱԿՈԲԵԱՆ — ՀԱՅՐԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ. (Պատկերազարդ ձեռնարկ աշխարհագրութեան). 2 ֆր.

11. ԵԶՆԻԿ ՔՀՆԱ. ԵՐԶՆԿԵԱՆՑ — ՁԱՅՆԱԴՐԵԱԼ ԱԶԳԱՅԻՆ ԵՐԳԱՐԱՆ Հայ դպրոցների համար (Աւժ. Տ. Եզնիկ քահանան որ հայկական ձայնադրութեան ուսուցիչ է Տփղիսի Ներսիսեան վարժարանին, 172 երեսներ. բաղկացած այս երգարանի մէջ ժողված և հրատարակած է ազգային 104 երգեր, ասոնց եղանակներն ալ ձայնադրելով հայկական խաղերով)։ 2 ֆր. 80 սանթիմ)

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ

Ա. ՀԱՑ ԴԻՒՑԱԶՆՈՒՀԻ ՄԸ (Եւրոպայի մէջ բնակած մի Հայի Հայաստանի վերայ արած խորհրդածութիւններովը կը սկսի և մի Անգլիացու բերնով կը պատմէ երեւանցի մի հայ աղջկան հաստատամտութիւնը մահմետական կրօնը չընդունելու և իր հայ նշանածի հաստատութեամբ մնալու համար), 50 սանթիմ.

Բ. ՀԱՑ ԳԻՒՂԱՅԻ (Հայ գիւղացիների բուն վիճակը որ շատերին անծանօթ մնացած է, ուսումնասիրելու պէտքը կը ներկայացունէ), 20 սանթիմ.

Գ. ՍԱՂՄՈՍ ԻՍՐԱՅԷԼԻ (Հայաստանի աղատութեան ցանկացող մի Հայի մաղթանքներն և մտածումներն են Սաղմոսի ոճով գրուած), 40 սանթ.։

ԼԵՒՈՆ ԼՈՒՍԻՆԵԱՆԻ ՊԱՏԿԵՐԸ

Կիլիկիոյ վերջին թագաւոր Լեւոն Լուսինեանի որ կը հանդչի Փարիզ ի Սէն–Տընի Կեղեսաինեանց վանքին մէջ, չիրմին պատկերը կը գտնուի «Արմենիա»ի խմբագրատունը։ Շիրմին վրայ կայ, տապանադիրէն զատ, և Լեւոն Թագաւորի արձանը։

Պատկերի գինն է 60 սանթիմ։ Խմբագրութիւնն կը վճարէ փոստի ծախքը։

ՀԱՅՔ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԸ

ՕՏԱՐՆԵՐԻ ԱԶԲՈՒԻՄ

ՓՈՐՁի խմբագրապետ Մեծ. Պրն. Արտաւազդ Չալհանեանեանի կազմած մի հրապարակական դասախօսութիւն է Հայկական խնդրին նկատմամբ Թիֆլիսի ժողովարանին մէջ 1879 թ. մայիսի 17ին։ Կը ներկայացունէ Եւրոպացիների նկատողութիւնները Հայերի մասին և կը նկարագրէ Լոնտոնի Անգլօ-Հայկական Մտամաժողովի արած միջնինը 1878 յուլիսին, Հայկական խնդրին համար։ Կը ծախուի «Արմենիա»ի խմբագրատունն։ Գինն է 1 ֆր., փոստի ծախքը մեր վրայ։

ՏՆՕՐԷՆ—ԽՄԲԱԳԻՐ
Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ
Le Gérant : FÉLIX ENFFANTIN.

ՄԱՐՍԷՅԼ
Հայերէն տպարան Մ. Փորթուգալեանի
Marseille. — Imprimerie du Midi, M. SCHICKLER rue Vacon 50.